Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 642 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում կառուցել 50 տեղով մանկապարտեզ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	161,883,870 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարան
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետ-ները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում 50 տեղով մանկապարտեզի կառուցում՝ 161,883,870 դրամ, ժամկետը՝ 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է 161,883,870 դրամի չափով մանկապարտեզի կառուցման շինարա-րական աշխատանքների իրականացում, մասնավորապես, կատարել հողային աշխատանքներ, պատերի, հիմնակմախքի, ծածկերի, միջնորմների կառուցման, դռների և պատուհանների տեղադրման, ներքին ջրամատակարարման և կոյուղու անցկացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման և ջեռուցման ցանցերի, արտաքին ինժեներական ցանցերի անցկացման, ներքին հարդարման աշխատանքներ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, Վարդենիսի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ